

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԿՐՈՆԻ ԴԵՐԸ 18-19-ՐԴ ԴՀ. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ
ՊԱՇՊԱՌՈՂԱԿԱՆ ՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածում կփորձենք Աերկալացնել 18-19-րդ դդ. բրիտանական պահպանողականության Աերկալացուցիչների և մասնավորապես Էդմունդ Բյորքի, Սամուել Քոլիջի և Բենջամին Դիզուաելիի՝ կրոնի և Եկեղեցու մասին արտահայտած հայացքները: Վերածնության դարաշրջանի և դրան հաջորդող Լուսավորականության տիեզերքի մարդակենտրոնության գաղափարները բուռն ձևով արտահայտվեցին ֆրամահական հեղափոխության ժամանակ: Այս երևույթը ճիշտ հակառակ ազդեցությունն ունեցավ Անգլիայում: Մյուս կողմից՝ Անգլիայում Եկեղեցու դիրքերը բավականին թուլացել էին: Եվ այս հանգամանքը մեծ հշանակություն ունեցավ պահպանողական քաղաքական փիլիսոփայության ձևավորման ժամանակ՝ կրոնին կննտոնական դեր վերապահելու գործում:

Այսպես, ըստ Սեմուել Ջոնսոնի, թորիական է նա, ով «հավատարիմ է պետության հին սահմանադրությանը և Անգլիայի Եկեղեցու առաքելական նվիրապետությանը»¹:

Ելնելով Ջոնսոնյան այս սահմանումից՝ Քվինտոնը անգլիական պահպանողական մտքը Աերկալացուցիչներին բաժանում է երկու խմբի: Առաջինն, ըստ Բրա, կրոնական թևն է (կրոնական ասելով՝ ի նկատի ունի Ջոնսոնյան սահմանումը):

Այս թևի Աերկալացուցիչները պահպանողական իրենց փիլիսոփայությունը սահմանում են՝ եղակետ ընդունելով կրոնական դրույթները և հատկապես մարդու օախանական մեղքը ու բարոյական անկատարելությունը: Այս ուղղության Աերկալացուցիչներ են ՈՒՀԱՐԴ Հովկերը, Էդուարդ Հայդը, Սեմուել Ջոնսոնը, Բյորքը, Քորիջը, Նյումանը:

Հաջորդը պահպանողականների (թորիների) աշխարհիկ թևն է, որին են պատկանում Զոր Սավիլը (Հոլիֆաքս), Լորդ Բոլինգբրոք և Դեկիդ Հյումը²: Վերջիններս առաքելապես շեշտում են մարդու մտավոր անկատարելությունը:

ՈՒՀԱՐԴ Հովկերին գտնվում է այս եղկուսի միջև :

Անհրաժեշտ է նաև նշել, որ այդ բաժանումը խիստ հարաբերական է, քանի որ և՝ կրոնական, և՝ աշխարհիկ պահպանողականների հայացքներում շեշտվում են թե՛ մարդու բարոյական և թե՛ մտավոր անկատարելությունը (ինարկե, ոչ հավասարապես):

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչ նկատի ունենք «կրոնական պահպանողականներ» ասելով, դիմունք Լինքոլն Ալիսոնի հետևալ մենաբանությանը: Հստ Ալիսոնի, զոյություն ունեն կրոնի երկու մտեցումներ: Առաջինը «զուրց» կրոնն է, երկրորդը՝ «պաշտոնական»:

«Հուրց» կրոնի համաձայն, զերբնականը գոյություն ունի այնպես, ինչպես բնականը, կամ ավելի պարզ՝ Աստված ավելի իրական է, քան, ասենք՝ ծառը: Աստծո պատվիրանները պետք է զերակայեն ցանկացած իրավիճակում:

¹ Samuel Johnson . Dictionary of the English Language – Tory.

² Quinton . p. 10.

Միջներու «պաշտոնական» կրոնն տարածատում է կրոնական մեկնաբանությունները զիտականից կամ բարոյականից: Աստված «գոյություն ունի», բայց դա այդ նույն «գոյությունը» չէ, ինչ որ այլ էակներին է: Էվոլյուցիայի տեսությունը և դրա հետևանքները ամենակին էլ չեն բախվում Աստծո ների և գոյության խնդիրների հետ: Նրա արարումը պետք է հասկացվի որպես միանգամայն առանձնահատուկ երևոյթ և պետք է տարածատվի երկրի ու տիեզերի առաջացման զիտական մեկնաբանություններից: Այսինքն՝ սա կրոնի այն տեսակն է, որտեղ բացակայում են «զիտելիքը», դոկտրինային մոտեցումները և «Աստծո» օնտոլոգիական մեկնաբանությունները:

Ալիստոնիան այս մեկնաբանությունները միգուցե արժեքավոր են 20–21-րդ դդ. պահպանողականների համար, եթե զիտությունն ու տեխնոլոգիական ծրագրերը հեղափոխական առաջընթաց են ապրում և անհրաժեշտ է դառնում համատեղել այդ ամենը կրոնական պատկերացումների հետ: Սակայն 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում նման զանազանումը նվազ քննադատելի կլիմեր, քանի որ հենց ինդուստրիալ հեղափոխության առաջ բերած փոփոխությունները ստեղծեցին հասարակական–քաղաքական մի իրադրություն, որին ի պատասխան առաջ է գալիս պահպանողական քաղաքական միտքը և արդեն 19-րդ դարի սկզբում ձևավորվում պահպանողական կուսակցությունն Անգլիայում: Եվ այդ ամենի համար եղակետ է ընդունվում Աստվածային նախախնամությունը, Աստծո կամքը, «լուրջ» կրոնը:

Բյորքը և Քոլրիջը (այստեղ ներկայացվող հեղինակները) հենց այդ տեսամելյութից են հանդես գալիս: Եվ անիմանտ կլիմեր պահել, թե բոլոր պահպանողականները հանդես էին գալիս որպես «պաշտոնական» կրոնի շատագովվածեր: Խորը կրոնական աշխարհայացքը հիմնարար սկզբունք է Բյորքյան մոտի համար: Ժամանակակից տեսաբաններից շատերն անզամ գտնում են, որ պահպանողականների բոլոր մյուս դրույթները պետք է մեկնաբանել՝ ելնելով հենց այս կրոնական աշխարհայացքից³:

20-րդ դարի պահպանողական մոտածողներից Քուինսին Հոգը, արձագանքելով Բյորքին, Քոլրիջին և Դիզրայելիին, հենց կրոնից էլ ակսում է իր պահպանողական փիլիսոփայությունը: «Ծշմարիտ պահպանողականություն չի կարող լինել, եթե այն չի հենվում քաղաքացիական պարտականության կրոնական տեսակետի վրա, և չի կարող լինել ճշմարիտ կրոն, եթե քաղաքացիական պարտականությունը դիտվում է որպես զուտ աշխարհիկ երևույթ»⁴:

Բրիտանական պահպանողականության (18-րդ դարի վերջ - 19-րդ դար) կրոնական ուղղվածությունը կարելի է ամփոփել ըստ երեք դրույթների՝ կումոլոգիական սկզբունքի, աստվածակենտրոն մարդկության և դրանց սոցիոլոգիական մաքսիմի համադրությամբ: Բյորքի և Քոլրիջի մոտ առավելապես, Դիզրայելիի մոտ մի փոքր ավելի պակաս, առկա են այդ երեք սկզբունքները:

Տիեզերքի և նրանում մարդու տեղի մասին պահպանողականների պատկերացումները եւալեն տարբերվում են լիբերալների և արմատականների տեսակետներից: Պահպանողականները ընդունում են տիեզերքի աստվածակենտրոն բնույթը՝ հավատալով, որ

³ Dwight Murphrey . Burkean Conservatism and Classical Liberalism . Washington D.C. 1982 . p. 65.

⁴ Quintin Hogg . The case for conservatism . Middlesex . 1948 . p. 16.

Աստված է ամեն ինչի չափանիշը⁵: Սա իմարկե հակադրության մեջ է մտնում լիբերալ-աերի և ռադիկալների այն տեսակետին, որ «մարդն է ամեն ինչի չափանիշը» (սովորաբեր դիցորդած):

Հայ Էռլայան Բյորքը և մյուս պահպանողականները հակազդում են Լուսավորության և ֆրանսիական հեղափոխության հակասավածային, հակակրօնական դրույթներին: Նրանք (պահպանողականները) փորձում են վերահստատել մարդկության պատմության սակրալ (սրբազն) բնույթը:

Այն է՝ հասարակության և պատմության ըմբռնման եղակետը Աստված և աստվածային կարգն են, այլ ոչ բնական վիճակը⁶: Սա նշանակում է, որ պահպանողականները դեմ էին նրանց, ովքեր քննադատում էին կրոնական հավատը և փորձում ճնապարհ իրենց տեսությունները՝ մարդկային բնույթունը քննարկելով Աստծո նկատմամբ մարդու ենթակայությունից դուրս:

Բյորքի կարծիքով Բանականության (Լուսավորության) դարաշրջանը տգիտության դարաշրջան էր: Եթե (ինչպես մարդկանց մեծ մասն է հավատացել մարդկային պատմության սկզբից) մարդկային բարեկեցության հիմքը աստվածային նախախնամությունն է, ապա քաղաքականությունը և բարոյականությունը սահմանափակել գույն բանականության շրջանակներում, անմտություն է: Բյորքը կարգ (order) ասելով ի նկատի ումի աստվածային կարգը:

Բյորքը չի պաշտպանում կրոնը այն բանի համար, որ վերջինս կարգն է պահպանում, այլ, ըստ նրա, աշխարհի կարգը ծագում է և մնում է մասը աստվածային կարգի: Կրոնը ժողովրդական կրթերը զայելու համար հարմար միջոց չէ միայն: Նա համաձայն չէ Պոլիբիոսի այն կարծիքին, որ կրոնը հնարել են, որպեսզի մարդկանց փրկեն անարխիայից⁷:

Բյորքի աշխատություններում շեշտվում է, որ նախախնամության նպատակը և տիեզերքի բանական ուղղվածությունն իրական են: Մարդկության հավերժականության համընդիանութ բնագդը, գիտակցության հարկադրանքները, անմահության հավատը, մարդկանց մոտ այն խորը գիտակցությունը, թե նրանք մասնակիցներն են ինչ-որ մի մեծ շարունակականության ու էույթյան և համանման գաղափարները նկատելի են նրա գրեթե բոլոր աշխատություններում, բայց Բյորքը չի փորձում ապացուցել ինչ-որ բան՝ թողնելով ապացուցումները միայն աստվածաբանական դպրոցներին: Նրա մոտ ակնհայտ են անտիկ շրջանի ըմբռնումների և քրիստոնեական հավատի համադրելի արժեքներ: Հունական բարեպահատությունը, գրեթե Պլատոնյան իր հնչենությամբ, ամփոփում է Բյորքի այն միտը, թե պետությունը աստվածային է: «Նա, ով մեզ տվեց բանականությունը, որպեսզի մեր առաքինությամբ այն կատարելագործներ, կամեցավ նաև դրա կատարելագործման անհրաժեշտ միջոցները, նա, մետևարք, կամեցավ պետությունը: Նա կամեցավ ցանկացած կատարելության կապն իր աղբյուրի և նախնական արքետիպի հետ»⁸:

⁵ Harbour William . The Foundations of Conservative Thought . London . 1982 . p. 12.

⁶ Nisbet Robert . " A Note on Conservatism " in The Works of Joseph de Maistre . ed. Jake Lively . New – York . 1971 . p. 14.

⁷ Russell Kirk . The Conservative Mind . p. 32.

⁸ Burke. Works 2. p. 370.

Մարդասիրական հատկանիշները կամ համընդիմուր բարեհոգությունը չեն կարող փրկել հասարակությանը, որը մերժում է իր աստվածային ենթակապությունը: Ցանկացած պետություն նախախնամության արարչության հետևանք է, անկախ օրանից, թե այդ երկրի կրոնը քրիստոնեությունն է, թե՝ մեկ այլ կրոն: Քրիստոնեությունը կրոններից բարձրագույնն է, բայց ցանկացած կրոն ճանաչում է տիեզերքի աստվածային բռությը, և ցանկացած աշխարհիկ իրավակարգ կախված է նախ և առաջ տվյալ ժողովրդի դարերով ժառանգություն ստացած կրոնի նկատմամբ ունեցած խորը հարգանքից: Այս հավատն ավելի է խորացնում Բյորքի քննադատությունը Հելպիթնզի նկատմամբ: Վերջինս, որ Հնդկաստանում Անգլիայի կառավարիչն էր, անտեսում էր և անգամ ուժնահարում տեղական կրոնական ավանդույթները և ծննդիր:

Եթե Բյորքը քննարկում էր եկորապական հասարակարգերը, նա դա անում էր «ժողովուրդների իրավունքի» (ius gentis) Եվրոպայի իրավական ավանդույթների (որոնք ծագում են հիմնականում քրիստոնեությունից), հոոմեական քաղաքացիական իրավունքի և գերմանական ավանդական իրավունքի կոնսեքսուում: Սրանք, ինարկե, Հնդկաստանում չեն կազմում իրավունքի աղբյուր: Սակայն Բյորքը «ժողովուրդների իրավունքը բխեցնում էր բնական իրավունքից (ius naturalis), արդարության այն սկզբունքներից, որոնք մենք բնական ենք համարում մարդկային պայմանների համար և որոնք մարդու համար նախատեսվել են Աստծո կողմից»⁹:

Բյորքը հավատում էր, որ բնական իրավունքը հավասարապես կիրառելի է ինչպես Հնդկաստանում, այնպես-էլ Անգլիայում: Նրա կարծիքով Հելպիթնզը Բրիտանիայի պատիվը անարգել էր՝ խախտելով Ասիայի ժողովուրդների իրավունքը, և նա նշում է, որ Շեյք Սինգը, մերժելով հարկեր վճարել Հելպիթնզին, ճիշտ էր վարդում, ըստ ժողովուրդների բնական իրավունքների և բարոյականության տեսանկյունից¹⁰:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Բյորքի համար բնական իրավունքն այլ իմաստ ուներ, քան բնական իրավունքի մյուս տեսարանների և մասնավորապես Զոն Լոկի համար: Այն իրավունքը, որի մասին Բյորքը է խոսում, ուացիոնալացված բնական իրավունք չէ, այլ Աստծո կողմից տրված, բանականից վեր գտնվող իրավունք, իրավունք, «որով մենք միավորված ենք տիեզերքի հավերժական շրջանակներում, որոնցից դուրս մենք չենք կարող շարժվել»: Նոյն ձևով էլ նրա համար դաշինքն այն նոյն Հասարակական դաշինքը չէ, ինչ որ Լոկի կամ Ռուսացի համար, այլ «հավերժական հասարակության նախնական դաշինքը, որը միավորում է ստորին և վերին բնությունները, տեսանելի և անտեսանելի աշխարհները»¹¹:

Քոլրիշի պահպանողականության ելակետը հանդիսանում են ոդին և Աստված՝ անհատական գիտակցությունը և Բացարձակը: Գիտական մոտեցումները կոչված են բացահայտելու նախկինը, իսկ իդեալիստական փիլիսոփայությունը՝ կրոնական մերժնշմամբ պետք է բացահայտի վերջինս և այդ ամբողջը պետք է միավորված հանդես գա քրիստոնեության մերքը: Քոլրիշյան այս նախագիծը երբեք չէր իրականանալու: Ավելին, չկա

⁹ "Natural Law" in "The Dictionary of Historical Terms" (ed. Joseph Dunner), New York . 1967.

¹⁰ Peter Stanlis , Edmund Burke and the Natural Law . p. 88 – 89.

¹¹ Cobban . p. 42.

որևէ վկայություն, որ Օրա ընկերներից կամ համախմբներից գերեւ մեկը հասկանար նրան: Նրա փիլիստիքայությունը շատ քշեր էին համակրում, և ոչ չեր հասկանում: Իդեալիզմը ծաղկում պիտի ապրեր ավելի ուշ, երբ Բրետին և նրա աշակերտները պետք է «փրկնին» անզիական մտավոր աշխարհը ուժիլիստարների գերիշխանությունից¹²: Նրա կարծիքով, դարաշրջանի մեծագույն թերություններից մեկն այն էր, որ փիլիստիքայությունն ու կրոնը տարանշատվել էին քաղաքականությունից: Քոլրիշը եղեղով այն ըմբռնումից, որ բոլոր դարակազմիկ մեղափոխությունները համընկնում են և անկասկած հետևանք են մետաֆիզիկական սիստեմների ծագմանն ու ամկմանը՝ հիմնականում մշակում է մի քաղաքական փիլիստիքայություն (հատկապես իր «Սահմանադրությունում»), որտեղ փիլիստիքայությունը, քաղաքականությունը և կրոնը փոխկապակցված են:

Ինչպես և մյուս պահպանողականները, նա ևս առանձնացնում է մարդու «նախնական մեղքի» զաղափարը, և սատ եռության սա էլ հանդիսանում է բարոյական անկատարության պահպանողականների եղակետային զաղափարը: «Նախնական մեղքը» նա քննարկում է իր «Ընկերը» աշխատության առաջին մասում: Բայց 1810-11 թթ. ունենալով անձնական (ընտանեկան) դժվարություններ և պարբերաբար թմրադեղները ընդունելով, նա հուսահատության զիրքն է ընկնում և «մեղքի» նկատմամբ նրա մոտեցումներն ավելի սուր և քննադատական տեսք են ընդունում: «Ես հավատում եմ և ընդունում որպես քրիստոնեության կարևորագույն դրույթ, որ ես մեղավոր արարած եմ, որ ես ունակ եմ բարոյական չարիքի... և որ մեղքը շատ արդարացիորեն գործում է իմ նկատմամբ, նախքան ես կանեմ որևէ բաց...»¹³:

Նա համադրում էր կրոնը և գիտությունը: Վերջինիս զարգացումը ամենահին էլ չեր բացառում աստվածային կարգը: Նա հավատում էր, որ գիտությունը և կրոնը համագոյակցում են: Նա իր ընթերցողներին փորձում էր համոզել, որ մերժեն Լուսավորության շրջանի սկեպտիզմը: Նա գտնում էր, որ բնության մեջ մարդու դերի մասին սառը և լուրջ մտորումները տրամարանորեն մեզ առաջնորդում են աստվածային մասին հավատին, որն ամբողջովին համարելի է գիտական ուսցիունալիզմի հետ:

Իր աֆորիզմներից 36-րդում, օրինակ, նա խոսում է «Էվոլյուցիայի» մասին, որպես հոգևոր ուժի, որը մեծացնում է բարոյական գիտակցությունը:

Առավել հասկանալի է կրոնի և նախախնամության օգտակարության շեշտադրումը նրա կողմից: «Հավ գործերը կարող են գոյություն ունենալ առանց լավ սկզբունքների, բայց լավ սկզբունքները երբեք գոյություն չեն ունեցել և չեն կարող ունենալ առանց լավ գործների»: Հետուաբար «եթե մենք հավատանք նախախնամության ծրագրին, մեր բոլոր գործերը դեպի բարին ուղղված կլինեն»¹⁴:

Կոսմոլոգիական տեսությունը, որը պահպանողականների մոտ համարվում է առաջնային, օգնում է պայմանավորել անհատի կարևորությունը և առաջնությունները, որ նա պետք է զարգացնի: Այստեղից էլ պահպանողականությունն անհատին դիտում է հոգևոր

¹² Նույն տեղում. էջ 161.

¹³ Նույն տեղում. էջ 218:

¹⁴ Coleridge . vol. 2 p. 289

տեսանկութից՝ առաջնորդյուն տալով անհատի հոգու առողջությանը: Պահպանողականորդությունն իրենց ներկայացնում է հումանիզմի որոշ տեսակ¹⁵:

Այս դիրքորոշումը հաճախ կոչվում է աստվածակենտրոն (թեոցենտրիկ) հումանիզմ: Մարդի տեսը շատ արտահայտիչ ձևով է տարբերակում «աստվածակենտրոն հումանիզմը»: «մարդակենտրոն հումանիզմ»: Աստվածակենտրոն հումանիզմը, ըստ Զրա, ճշմարիտ քրիստոնեական է, իսկ մարդակենտրոնը ուժ է ստանում Վերածնունդից և Ռեֆորմացիայից:

«Հումանիզմի առաջին տեսակը ընդունում է, որ մարդու համար կենտրոնը հանդիսանում է Աստված և շեշտում է քրիստոնեական այն սկզբունքը, որ մարդ միաժամանակ և՛ մեղավոր, և՛ փրկված է, ինչպես նաև առանձնացվում են քրիստոնեական գթապրոտությունը և ազատությունը: Հումանիզմի երկրորդ տեսակը ենթադրում է, որ մարդն է իր և, հետևաբար, ամեն ինչի կենտրոնը: Այն ենթադրում է մարդու և ազատության նատուրալիստական հայեցակետ»¹⁶:

Իհարկե, թե՛ անտրոպոգենետրիկ (սոփիստների մոտ) և թե՛ թեոցենտրիկ (հատկապես Պլատոնի՝ «Աստված է ամեն ինչի չափանիշը») հումանիզմի դրույթները հիմնականում ծագում են անտիկ փիլիսոփայական մտքից: Սակայն արդի պայմաններում քաղաքական փիլիսոփայություններից պահպանողականների մոտ է, որ աստվածակենտրոն հումանիզմը նման կարենորություն է նորից ստանում:

Պահպանողականների կոմոդիգիական սկզբունքից և աստվածակենտրոն հումանիզմից ծնկում է սոցիոլոգիական սկզբունքը, ըստ որի հասարակությունում կրոնը հանդիսանում է անկյունաքարը:

Բյորքի մոտ շատ հաճախ կարելի է հանդիպել աստվածակենտրոն հումանիզմի և սոցիոլոգիական սկզբունքի դրույթների: Բյորքը շատ կարևոր ներդրում է ուժեցել պահպանողականության կրոնական ուղղվածության մեջ նաև առաջ ի նկատի ուժնալով այն թեզը, ըստ որի մարդն իր բնությամբ կրոնական է: Սրանով նա նաև փորձում է ցուց տալ, որ մարդու հոգեկան առողջության համար անհրաժեշտ է կրոնական հավատ, որ վերջինս անհրաժեշտ է մարդուն իր մարդկային հնարավորություններն իրականացնելու համար: Նա ի նկատի ունի, որ մարդիկ հասարակությունում պետք է կարգավորեն իրենց կյանքը համաձայն որոշ կրոնական սկզբունքների, որպեսզի հասարակությունը լինի կայուն, և որպեսզի անհատի համար առողջ միջավայրը հնարավոր դառնա:

«Մենք գիտենք, և դա մեր հպարտությունն է իմանալ, որ մարդ իր բնույթով կրոնական է ակ է, որ աթենիզմը ոչ միայն մեր քանականությանը, այլ նաև մեր քանազդերին է դեմ և որ այն երկար չի կարող իշխել: Բայց եթե... մենք քացահայտենք մեր մերկությունը՝ մի կողմ թողմելով քրիստոնեական կրոնը, որը մինչ այժմ մեր պարծանքն է եղել և մեր քաղաքակրթության աղբյուրը, մենք պետք է զգուշանանք (տեղյակ լինելով, որ միտքը չի հանդուրծում դատարկություն), որ մի կոպիտ, կործանարար և այլանորող նախապաշտումը կզրավի դրա տեղը»¹⁷:

¹⁵ Harbour . p. 13

¹⁶ Jacques Maritain, True Humanism . London .1938, p. 19.

¹⁷ Reflections . p. 91.

Այնուհետև Բյորքը առաջ է քաշում այն դրույթը, որ քաղաքացիական հասարակության համար կրոնն է եական հենք է: «Մենք գիտենք և, որ ավելի լավ է, մենք ներքուստ զգունք ունք, որ կրոնը քաղաքացիական հասարակության հիմքն է և բոլոր բարիքների և միահարությունների աղբյուրը»¹⁸: Սոցիոլոգիական դրույթն այստեղ առավել քան ակնհայտ է, փաստորեն կրոնը լավ հասարակության առաջնային բաղադրամասն է:

Հատ Բյորքի, աղքատությունը, չարությունը և դժբախտությունը մշտապես ներկա են աշխարհում: Մեղքը, որքան էլ որ սարսափելի է, այնուամենայնիվ իրական փաստ է՝ լինելով մեր արատավորության հետևանքը և ոչ այս կամ այն հաստատության:

Կրոնը դարմանող միջոցն է այն հիվանդությունների, որոնք երբեք հեղափոխությամբ կամ օրենսդրությամբ հնարավոր չեն: Վերացնելու: Ֆրանսիայում թեև հեղափոխականները 1789, 1791 և հետո՝ 1793 թթ., հայտարարում էին կամքի ազատության մասին, բայց միաժամանակ կաթոլիկ քահանաներին անգույն մահապատճի էին ենթարկում, և սա արվում էր իրենց հակ օրինագծերի բացահայտ ժխտմամբ: Փակլում էին եկեղեցիները: 1793 թ. նոյեմբերին փակվեցին Փարիզի բոլոր եկեղեցիները, իսկ դրան հաջորդող 20 օրվա ընթացքում 2436 ֆրանսիական եկեղեցիներ վերածվեցին «Բանականության տաճարների»¹⁹: Ավելի սարսափելի բան, քան հեղափոխականների այս քայլերն են, Բյորքի համար դժվար էր պատկերացնել:

Որպեսզի մարդկանց մեջ տարածվի գթարտությունը, անհրաժեշտ է եկեղեցու հաստատությունը, որն էլ պետք է ազգի մի մասը կազմի: Բյորքը նկատեցին իդեալականացված անզիկան հաստատություն է, բայց ավելին, քան անզիկամ: Նրանում առկա է նաև ավանդականությունը, ինչպես նաև կաթոլիկ դավանանքը, այնպես որ արմատական անզիկանները (Շերայալ տարեց Նյուքասլի դքսի) գանգատվում էին, որ Բյորքը այսին որ կրթություն ատացած լիներ Ս. Օմերի պապական (կաթոլիկ) գիմնազիայում: «Իմ կարծիքով, կրոնը մարդու գերազուն բարիքն է, զրա նպատակը», ասում էր նա²⁰:

Ինչպես Կորբանն է նշում, Բյորքի «իդեալը ոչ բողոքական էրաստականությունն է (Erasianism) և ոչ էլ կաթոլիկական թեոկրատիան: Այն ավելի շատ հման է երկրի վրա Աստծո թագավորությանը»²¹:

«Եկեղեցին և պետությունն իրարից անբաժանելի գաղափարներ են, և դժվար է հիշատակել մեկը՝ առանց հիշատակելու մյուսը»²²:

Թեև եկեղեցին և պետությունը երբեք բաժանելի մասեր չեն, ճշմարիտ կրոնը ազգային ոգու արտահայտություն չէ միայն, այն գերազանցում է անսահմանորեն երկրի (գրավոր օրենքին՝ լինելով բոլոր օրենքների աղբյուրը:

Բյորքը բազմից մեջքերելով անտիկ մտածողների, մանավանդ Ցիցերոնի աշխատություններից, խոսում է ius naturale-ի մասին, տիեզերքի օրենքի մասին, որը աստվածային կամքի արարչության հետևանք է, որի թերի դրսադրումներն են մարդկանց ստեղծած օրենքները:

¹⁸ Reflections . p. 90.

¹⁹ The Cambridge Modern History . vol. 8. p. 359.

²⁰ Burke . Works . 4. p. 115.

²¹ Cobban . p. 93.

²² Reflections . p. 99.

«Մարդկանց բոլոր օրենքները դեկլարատիվ են: Դրանք կարող են փոխել նախնական (բնական) արդարության կիրառման ձևերը, բայց ամենին էլ իշխանություն չունեն դրա բովանդակության նկատմամբ»²³:

Մարդիկ իրավունք չունեն փոփոխելու օրենքներն ըստ իրենց քամահրանքի: Գերազուն օրենքը չի գտնվում որևէ քաղաքական համայնքի իշխանության մերքու, որպեսզի այն հարմարեցվի կամ փոփոխվի: Մեր օրենքները ծագում են հավերժական բարոյական օրենքներից: Գերազույն երջանկությունը՝ բարոյական երջանկությունն է, ըստ Բյորքի, և տառապանքների պատճառը՝ բարոյական չարիքն է (moral evil): Հպարտությունը, փառամոլությունը, ազարությունը, Վրիժառությունը, կիրքը, սանձազերծ վարքը արատներ են, որոնք իրականում խնդիրներով լի կանչի հետևանքներ են: «Կրոնը, բարքերը, օրենքները, արտոնությունները, ազատությունները, մարդկանց իրավունքները, առիթներ են հեղափոխության համար, որոնք օգտագործվում են «սենտիմենտալ հումանիստների» և դժբախտ դեմքների կողմից, որոնք կարծում են, թե մեր դժբախտությունների պատճառները ավանդական հաստատություններն են:

Բայց իրականում մարդու սիրտն է չարիքի աղբյուրը: «Չի կարելի վերացնել չարիքը՝ վերացնելով միասնական, պետության նախարարներին և կամ արգելելով Ավետարանը... իմաստում մարդիկ պետք է փորձն դարմանել արատները և ոչ թե անունները»²⁴: Ոչ ոք իրավունք չունի կասկածելու, թե արդյոք «Ամենակարող ի գորո՞ւ է վերափոխել ճշտի և սխալի եական բաղադրամասերը»²⁵:

Բյորքը առանձնացնում է առաքինության երկու հատկանիշներ, որոնք եական են անձնական բավարարվածության և հասարակական խաղաղության համար: Դրանք են՝ խոհեմությունը և հիմազանդությունը: Առաջինն առավելապես անտիկ հասարակական-փիլիսոփայական դրույթ է, երկրորդը՝ քրիստոնեական ուսմունքների դրույթներից: Առանց դրանց, մարդիկ խղճալի են, իսկ բարեգթությունից գուրկ մարդիկ հազիվ թե կարողանան ըմբռնել այդ հազվագյուտ առաքինի հատկանիշները:

Բյորքյան կրոնական պահպանողականության մեջ շեշտվում է իշխանության և Արադակավարի անձեռնմխելիությունը: Կրոնն ինքնին ենթադրում է հիերարխիա հասարակության մեջ: «Ցանկացած ճշմարիտ կրոնի եական մասն է այն, որ լինի հիմազանդություն տիրոջը, վստահություն Արա հայտարարություններին և ընդորինակման ձգտում Արա կատարելություններին»²⁶:

Բոլոր մարդիկ, ովքեր իշխանություն ունեն, պետք է հասկանան, որ իրենց վստահված է մի բան, որ «իրենց վարքի համար պետք է պատասխանատու լինեն միակ մեծ Ֆիրոջը, Արարշին և հասարակության հիմնադրին»:

Բյորքը պաշտպանում էր ոչ թե ընդհանրապես բոլոր կրոնները, այլ Անգլիկան և Կաթոլիկ Եկեղեցիներին՝ ընդում աղանդների²⁷:

²³ Burke . Works . 4 . p. 22.

²⁴ Burke . Works 6 p. 32 - 33.

²⁵ Burke . Works 6 p. 21 - 22.

²⁶ Reflections . p. 159.

²⁷ Clark. English Society . p. 252.

Ի տարբերություն Բյորքի, Քոլիշը առավելապես հետաքրքրված էր Անգլիայի Եկեղեցու տիրող իրավիճակով: Նա առանձնապես չի խորանում կրոնական խնդիրների մեջ, բայց իր առաջարկած իդեալական ծրագրից երևում է, որ նա ևս հավատում է աստվածականություն հումանիզմի և հասարակության աստվածային ծագման դրույթներին: Հատ Քոլիշի, կրոնը գտնվում է հասարակության գոյության հիմքում: «Ծշմարիտ թե սխալ, կրոնը միշտ եղել է և դեռ հանդիսանում է հասարակության «առաջական կենտրոն»», որին ամեն ինչ հարմարեցվում է կամ ստիպված է հարմարվել»²⁸.

Հատ նրա ազգային Եկեղեցին պետության մասը պիտի կազմի, և հիմնականում երկու նպատակ է նրա առջև դրվում: Առաջինը՝ ժողովրդի մոտ հովանի զգացողության ամրապնդումն է (ինարկեն կրոնի միջցոցով), որը կնպասարի երկրի առաջադիմությանը, իսկ երկրորդը՝ մարդկանց իսկական քաղաքացի դարձնելն է, քաղաքակրթելն ընդհանրապես²⁹: Միաժամանակ Եկեղեցին չի փոխարինում պետությանը, այլ ամրապնդում է այն և չպետք է միշտամտի ամեն խնդրով պետության գործերին: Հակառակը «Եկեղեցին պետք է պաշտպանվի պետության կողմից», և պետությունն էլ իր հերթին չպետք է միշտամտի կրոնական Եկեղեցական հարցերին³⁰:

Անհրաժեշտ է նշել, որ Քոլիշը տարբերակում է Ազգային և Քրիստոնեական Եկեղեցիներ հասկացությունները: Քրիստոնեական Եկեղեցու հիմնական ֆունկցիաները կրոնական են: Այն ավելի մերժակ է և գործում է ամենուր, աշխարհի մեծ մասում: Մինչեւ Ազգային Եկեղեցու նրա ծրագիրը վերաբերում է զուտ Անգլիային և իր մեջ է մերառում մեծ թվով աշխարհիկ ֆունկցիաներ:

Քրիստոնեական Եկեղեցին ինքնամփոփ է: Այն, ի տարբերություն Ազգային Եկեղեցու, կարող է կապ չունենալ պետության հետ: Քրիստոնեական Եկեղեցու Քոլիշյան մեկնաբանությունը և՝ հաստատություն է, և՝ գաղափար: Այսինքն, ցանկացած քրիստոնյա հավատացյալ մասն է կազմում Քրիստոնեական Եկեղեցու: Եվ այսուղե կարևորվում է կրոնը, հավատը: Հավատը առավելապես անհատներին է պատկանում, և հավատացյալների համայնքը չենք կարող նույնացնել տեսանելի Եկեղեցու հետ: Այսինքն այն մի անտեսանելի և հոգևոր Եկեղեցի է, որը ճանաչելի է միայն Աստծուն: Այսպիսով Քրիստոնեական Եկեղեցին առավելապես ներառում է իր մեջ քրիստոնեական հավատը և հավատացյալներին:

Ազգային Եկեղեցում գործում են եկեղեցականները: Վերջիններս Ազգային Եկեղեցու հետ միասին կազմում են չորս զյանապոր հաստատություններից մենք Անգլիայում (թագավորը, համայնքականները և լորդերը): Նա, ըստ երևույթին նկատի ունենալով միշտադարյան Եկեղեցին պահում է, որ Ազգային Եկեղեցին միշտորդելու է հարուստների և աղքատների, պետության և ժողովրդի միշտ: Մինչեւ Անգլիան Եկեղեցին ճակատագրական սխալ է թույլ տվել՝ սկսած Ռեֆորմացիայից իրեն կապերով միայն միապետի և աղքունիքի հետ, օտարանալով ժողովրդից:

²⁸ Coleridge. Works . vol. 6 p. 67.

²⁹ Works . vol. 6 . p. 70.

³⁰ Works . vol. 6 . p. 98.

Հատ Էության, առանձնամալով Հոռմեական Եկեղեցուց, այն դադարեց լինել վերագային, բայց փոխարենը վերածվեց թագավորական Եկեղեցու: Այսպիսով, Անգլիկան Եկեղեցին (Established Anglican church) ձախողվել է ի կատար ածել իր հաստատման (establishment) առաջնային նպատակը³¹, այն է՝ դառնալ ազգային և պատկանել բոլորին:

Ազգային Եկեղեցին իր միջոցները (որոնք նա ստանում է ժողովրդից) պետք է ուղղի 4 նպատակների՝ 1) համալսարանների և դպրոցների պահպանում, 2) բոլոր ծխերում քահանաների և ուսուցիչների ներկայության ապահովում, 3) ներկեցիների և դպրոցների կառուցում կամ վերանորոգում, 4) ծերերին և թիվանդներին օգնություն: Այս ծրագիրն այժմ կարող է հասարակ, թեև մի փոքր իդեալիստական թվական, բայց Քոլրիշի ժամանակաշրջանում դրանք նորովայ էին և դրանց կարիքը խիստ զգացվում էր: Խնչակն տեսանք, չափազանց հետաքրքրի են նրա մեկնաբանությունները «Եկեղեցու» վերաբերյալ ընդհանրապես: Նրա համար կրոնը կազմում է կյանքում ամեն լավ բանի և գեղեցիկի ամբողջությունը³²:

Դժբախտաբար, քոլրիշյան ծրագիրը երբեք չիրականացավ: Եկեղեցին մասնավորապես չկարողացավ հաստատել իր ազդեցությունը պետական կրթական համակարգում, ինչպես նաև ընդհանրապես պետության հետ կապը երբեք այնպիսին չդարձավ, որը ցանկալի կլիներ Քոլրիշի և բազմաթիվ պահպանողական մտածողների համար:

Դիզուալելին թեև չունի կրոնի մասին առանձնահատուկ մոտեցումներ, բայց նա, ինարկե, սկսած իր երիտասարդ տարիներին գրած հոդվածներից, մինչև իր քաղաքական գործունեության հասուն շրջանը, միշտ առանձնացրել է կրոնի և Եկեղեցու կարևոր դերը անգլիական հասարակության համար: Օրինակ, դեռևս 1834 թ. նա գրում է, որ «ժողովրդի շահերից է բխում Եկեղեցուն աջակցելը, քանի որ Եկեղեցին իր հայրենակալվածքն է (պատրիմոնիան), նրա միակ ժառանգական սեփականությունը: Եկեղեցին իշխանության հասնելու միակ դարպանն է, ուսման պատվի արժանանալու իր ճանապարհը»³³: Նրա կարծիքով (ի տարբերություն Քոլրիշի) Եկեղեցին միշտ պաշտպանել է ժողովրդին:

Իր երիտասարդ շրջանում գրած վեպերից մեկի նախաբանում նա այն կարծիքն է, որ շատ քիչ լավ բաներ են պահպանվել Անգլիայում և Եկեղեցին դրանցից մենքն է: Իսկ այդ ժամանակաշրջանում ստեղծված ծանր բարոյական պայմաններում միայն Եկեղեցին է «դարմանիշ հաստատությունը» (remedial agency): Եվ ոչ մի հասարակություն չի կարող լինել հարատև, եթե «այն չի ընդունում հավատարմության և կրոնական պատկառանքի սկզբունքները»³⁴:

Նա միշտ այն կարծիքին է եղել, որ Եկեղեցին լորդերի և համայնականների հետ միասին կազմում է Անգլիայի ներկա երեք դասերից և հաստատություններից մեկը: Նրա կարծիքով Եկեղեցին միշտն տեղ է գրավել, կապող օրակ եղել լորդերի և համայնականների, վերնախավի և ժողովրդի միջև: Հետաքրքրին այն է, որ այնտեղ, որտեղ Քոլրիշը տեսնում էր որևէ լուրջ հիմնախնդիր (Եկեղեցին միավորվել էր արքունիքին և կտրվել ժողովրդից),

³¹ Cobban. p. 242.

³² Նոյն աշխ. p. 244.

³³ Disraeli. Whigs and Whiggism . p. 26.

³⁴ Disraeli. Tancred , General Preface , 14 . 1870 ed. London.

Դիզրայելին շրջանցեղով այն՝ ամենակին էլ 1830–40-ական թվականներին չեղ տեսնում Եկեղեցուն վերաբերող որևէ հիմնախնդիր. Ավելին. օրինակ՝ Քոլրիշը գտնում էր, որ Ռեֆորմացիայից հետո Անգլիկան Եկեղեցին պետք է դատնար ազգային (հակառակ իր նախկինում ունեցած ոչ ազգային կարգավիճակի), որը չիրականացավ: Խակ Դիզրայելին գտնում էր, որ «Բոգևորականությունն այս երկրում Ռեֆորմացիայի շնորհիվ... դարձավ ազգային: Նրանք (Բոգևորականները) մեր հայրենակիցներն են, և նրանց սխալներն իրենց ժամանակաշրջանի և ողջ ազգի սխալներն են, և ոչ ավելին»³⁵:

Ի հակադրություն իր վերօնիշյալ տեսակետների, 1835 թ. իր «Vindication»-ում արտահայտած մտքերն ավելի մոտ են Քոլրիշի արտահայտած պրոբլեմատիկ խնդիրներին: Խոսելով Թորիների ծագման մասին (17-րդ դար), նա նշում է, որ «Բոգևորականները... չափազանցեցնում էին միավետության իշխանությունն ու բնույթը, որի մեջ նրանք իրենց պաշտպանին էին տեսնում: Այստեղից էլ աստվածային իրավունքի և պահի ենթակայության սկզբունքները հնացեցվում էին բողոքական կրոնավորների կողմից, ինչը ողջունվեց ազատ և ոգերված ժողովրդի կողմից, որը գտնում էր, որ այդ արտահայտությունները դրսորում էին թագավորի և Եկեղեցու չափավոր իշխանությունը: Այսպիսին է Թորի կուսակցության ծագումը մեր երկրում»³⁶:

Ցանկացած կառավարության պարտականությունն է ամրապնդել հասարակության ոգեներ-կրոնական ուղղվածությունը: «Հասարակությունն ունի ինչպես ոգի, պանակն էլ մարմին... Մարդու ոգեներն բնությունն ավելի ուժեղ է, քան սահմանադրությունն ու օրենք-ները են: Ոչ մի կառավարություն երկար չի պաշտոնավարի, եթե այն չընդունի որպես իր հիմք, և ոչ մի օրենսդրություն երկար չի գոյատևի, եթե դրանք չեն բխում այս աղբյուրից: Այս սկզբունքը կարող է զարգանալ բազմաթիվ ձևերով, տարբեր Եկեղեցիների և դավանակների միջոցով: Բայց սկզբունքը ատակածային է: Ինչպես ժամանակն է բաժանվում որ ու գիշերվա, այնպես էլ կրոնն է հենվում Աստծո նախախնամության և մարդու պատասխանատվության վրա»³⁷:

Հատկապես 1860-ական թթ. նա շատ գրադարձ էր Անգլիկան Եկեղեցու շահերը պաշտպանելով: 1861 թ. իր նամակներից մեկում նա անգամ նշում է, որ «Անրքին քաղաքականության մեջ միայն մեկ հարց կա այժմ Եկեղեցու պահպանումը: Այս հարցում չի կարող լինել որևէ զիշում կամ կեղծ լիրերալիզմ»: Անգլիկան Եկեղեցու ում ուղղված հիմնական սպառնալիքը գալիս էր Ազատագրման ընկերությունից (Liberation Society), որի հիմնական նպատակն այն էր, որ անգլիկանները և մյուս կրոնական ուղղությունները հավասար իրավունքներ և արտօնություններ ունենային»³⁸:

Դիզրայելին 1860 թ. իր ճառերից մեկում դիմում էր իր ու ունկնդիրներին՝ ամսենել իրենց դոկտրինային տարբերությունները և միավորվելով կազմել Եկեղեցու պաշտպանության նոր ընկերություններ, որպեսզի հակադրվեն աղանդավորներին: 1861 թ. իր ճառերից մեկը (Լյութբրոնի) լցված էր «Երիտասարդ Անգլիայի» ոգով: Եկեղեցին, ըստ նրա, «փառանել կազմակերպություն է՝ հարուատ, հզոր, անկախ, երկարատև ավանդությամբ հանդերձ»,

³⁵ Disraeli . Whigs and Whiggism . p. 189.

³⁶ Disraeli . Whigs . p. 213.

³⁷ Monypenny . vol. 5 p. 265.

³⁸ Jenkins T. A. Disraeli and Victorian Conservatism . London. 1996. p. 69.

սակայն, բարեքախտաբար, այն պետությանն էր հանձնել քաղաքացիական իշխանությունը, և այսպիսով երկուով միասին կազմել են ընկերություն, որն ավելի շատ հասարակական բարեկեցությանն է ուղղված, քան գերիշխանության ձգտող ավերիչ մրցակցության³⁹:

Այսպիսով, Բյորքը և մյուս պահպանողականները կրոնը համարում էին եվրոպական քաղաքակրթության անկյունաքարտը: Քննարկելով այն «Վտանգավոր» խնդիրը, որ քրիստոնեության ամկոմ է տեղի ունենում իրենց ժամանակներում, պահպանողականները զգուշացնում էին խաղաղությանը և կայունությանը սպառնացող երկու հնարավոր վտանգների մասին: Առաջին, նրանք կարծում էին, որ կրոնական հավատի փոխարեն կառաջանա անկանոնություն: Նրանք վախենում էին, որ հասարակության մեջ կտարածվի պիհիլիզմ՝ կայուն հասարակական կյանքը դարձնելով անհնարին մի բան: Երկրորդ, հավատալով, որ մարդի իր էությամբ կրոնական էակ է, նրանք այն կարծիքին էին, որ պիհիլիզմը ժամանակավոր երևույթ է, և որ նոր աշխարհիկ և քաղաքական կրոններ կտարածվեն և կփոխարինեն քրիստոնեությանը՝ հասարակությանը կործանման եզրին հասցնելով:

Բյորքը սարսափած էր ֆրանսիական հեղափոխության, ինչպես ինքն է ասում, «կրօնական եռանդից»: Պահպանողականները ընդգծում էին տիեզերքի, անհատի և հասարակության աստվածակենտրոնությունը: Այդ երեքի առկայությունն առանձնացնում է պահպանողական քաղաքական միտքը մյուս քաղաքական փիլիսոփայություններից: Սակայն պահպանողականները, խոնափելով անհավատությունից և ակեպտիցիզմից, որոնք վերջին հաշվով մարդուն և հասարակությանը դարձնում են պիհիլիստ, միաժամանակ խուսափում էին կրոնական դոգմատիզմից ևս: Պահպանողական միտքը, ինչպես Վեգելինն է ասում, գործում է «միջին գոտում» («the realm of the in-between»): Նրանց կրոնական ուղղվածությունը նշանակում է, որ պահպանողականները հավատում են գոյի աստվածային բնույթին և փորձում են կարգավորել իրենց կյանքը և մտածելակերպը դրոշակի տրանսցենդենտալ ճշմարտությունների համաձայն: Բայց նաև ընդունելով գոյի սահմանափակությունը (Վերջավորությունը) «միջին գոտում», նրանք հասկանում են, որ իրենց դաշինքը Արարչի հետ շատ սահմանափակ է: Անհրաժեշտ է գործ ունենալ ամենօրյա կյանքում այսներկրային երևույթների հետ: Եվ դրա համար անհրաժեշտ է ունենալ պատերկրայինի մասին համապատասխան գիտելիքներ: Այսպիսով, պետք է հավասարակշուություն ստեղծվի մարդու և տիեզերքի մասին գիտելիքների միջև: Նախ պետք է համապատասխան ուղարկություն դարձնել անհատից և իր միջավայրից անդին գոյի մասին, ինչպես նաև ամենօրյա աշխարհի խնդիրների և գիտելիքների վրա:

Բյորքը, Քոլրիջը և Դիզրայելին համապատասխանաբար արձագանքելով իրենց ժամանակ տեղի ունեցող իրադարձություններին, փորձում էին ապահովել այդ հավասարակշուությունը: Բյորքի մոտ առավել շեշտադրվում էր քրիստոնեական կրոնը, Դիզրայելիի մոտ՝ Եկեղեցին, իսկ Քոլրիջը փորձում էր այդ երկուան էլ միավորված ձևով ներկայացնել: